106. ԵՐԳՅԻՆՔԱՆ ՎԵՐ ԸՆԳԱԾ ԽԱՆՉԱԼԸ

Իլալ ա, չիլալ մին կնեգյ, մին տղա։ Էտ կնեգյը շատ քյասիր ա իլալ։ Էտ կնգանն ըն տվալ ուրանց կյուղին տավարը, վեր տանե ուրան տղեն նհետ պահե։ Մարը նան տղան տավարը ըսկսալ ըն պահիլը։ Մին օր էլ տավարը պըհելիս երգյինքյր մթնալ ա, կըծկեծին ա ըրալ, ըրուտացալ, շըմփշըմփալի թոռը նի կալալ, լհա ասիս էս սհաթես աշխարքը փուլ ա կյալական։

Էտ տղան տավարը թողըմ ա դուզումը, ինքյը նի մննում մին քարու տակ։ Վեր կըծրկրակ ա անում, մթնվում, երգյինքան մին վրեսկե խանչալ ա եր ընգնում, էտ տղեն կողքեն տնգվում։ Տղան էտ խանչալը յոր ա օնում, տանում տոնը։ Քշերը տրան ուրաղ ըն տամ, վեր. «Էտ խանչալն օնե քըռասուն կյումշի օժ, կկապիս մեշկիտ, հենց կանիս, վեր մին մարթ էլա գյիդա վեչ։ Էտ խանչալը քու մեշկատ վեր եր կալին, տու մեռած ըս»։ Էտ օրանը ետը տղան տրեռնըմ ա մին շանավար, տա մին կյումաշը մին ծեռքավն ա խղրցնըմ։ Մին օր էտ տղան քնենքյ ա անըմ, ասըմ ա՝ օժը կա, ամմա հարկավեր ա մին փեշակ սվերիլ։

Տավարը տամ ա մորը, վեր պահե, ինքյը եր կենում ուրանց շենան տուս կյամ, թա տրեսնա հի՞շտեղ ա ամալ կյամ մին լավ փեշակ սվերած, լավ էլ ապրած։

Ընգսնամ ա հղեն քյնում։ Շատ ա քյնում, թա խրեգյ, էտ ինքյն ա գյուդում։ Օխտինչի օրը մին հղրցավ քյնալիս, ուրան նման մին շահիլ ա շհում։ Ըտահանք ուրուր անա հըրցըփորց ըն անըմ, էս

տղան ասում ա, վեր ինքը մին եթիմ տղա յա, օնե մինակ մին մար, ուրան էլ օնե քրռասուն կյումաշու օժ։ Քյնամ ա, վեր մին լավ տրեղ թթենա, փեշակ սվերե, ասյրե։

Էն մինն էլ ասում ա, վեր ինքն էլ ծովումը ասեղ կը քթենա, ինքն էլ ա օղում իտի մին տրեղ քյնի։ Ասում ըն՝ մին չինինքյ, էրկու ինինքյ, մին տրեղ քյնինքյ։ Մհենգյ էլ էրկու հոքավ ընգնում ըն հղեն, քյնում։

Շատ ըն քյնում, խրեղյ ըն քյնում, ուրանք ըն գյուղում, էլհա մին հրդրցում մին տղա յա ջհում։ Էլհա ըսկսում ըն ամեգյը ուրանց ոյիդացածը ուրուր ասիլը։ Էս նոր տղան էլ ասում ա, վեր ինքյը ասթխաղետ ա, վեր ասթխը ծլյամ ա, ոյուղում ա հուր ասթխ ա, հու՞ վա մեռալ։ Ըսաահանք ուրուր նաղլ ըն անում ուրանց թաքունտղկարը։ Էտ տղան էլ ասում ա, վեր ուրան մաշկեն մին խանչալ կա, վեր յոր օնին, ինքը մեռած ա։ Ըտրանք իրեքավ ըխպըրանում ըն։

Շատ ըն քյնամ, խրեգյ ըն քյնամ, հրսնում ըն մին քաղաք, արևսնում ըն, վեր էտ քաղաքը շատ կյեղեցիկ, ղաշանդյ ա, ամմա մաչին մարթ, սաս, սեմուր չիկա։ Շատ ման կյալանը ետը քյնում ըն նի մրննում մին տոն, տրեսնում մին հուրի-փարի ախչիգյ։

Էտ ախչիդյը ըտրանց ասում ա.— Տուք մղափուն ըք, քյեցեքյ ըսուեղան, թա չէ, էս սհաթըս օշափը կյալու ա ծրեղ ղինար-ղինար անե։

Էտ քրռասուն կյումաշու օժին տար տղան ասում ա.— Տու վախել մեր։

Ուրան էրկու ափսեը կյողլ ա կցնում, ինքյն էլ ըխճկանը քշտեն նստում, ըսկսում գրուցը։ Մին էլ, ըհը՛, տրեսնում ըն մին ծառ ջնաղեն տրած օշափը եկու։

Լհա վեր տանը մղակավը նի մտավ, տրեսավ էն տղեն թա չէ, խիլլա ուրխացավ, համ էլ թա.— Էս հի՞նչ լավ պեն ա, հեսա մին սուտկա յա շոռ ըմ կյամ, մին պեն չըմ քթենում, տու մի ասիլ, վրևրսը եկած, տանը նստած ա, յրես էլ բեյխարար։

Վերչը էտ քրռասուն կյումաշու օժի տար տղան, մին էլ օշափը կոխըլ ըն կենում։ Էտ տղան օշափեն վեր տափեն ա կյամ, ծենը ծունը կտրրմ ա։ Տղան ըտրան տանըմ ա, ռադ անըմ։ Ընդեսանը ախպերքյը տուս ըն կյամ։ Էն ծովըմը ասեղ քթենող տրղեն թողըմ ըն ըխճրկանը քշտեն, ուրանք քյնում։

Հրսնըմ ըն մին շրհար, տրեսնում էլհա կարքին-սարքին շրհար ա, ամմա մեչին մարթ չիկա։ Էլհա քյընըմ ըն նի մննում, տրեսնում մին տոն, մին ախճիգյ։

Ախճիգյն ասում ա. — Շո՛ւտ արիք, քյեցեք, թա՛ չէ օշափը կյա՛լու յա, վա՛յ ծրեզ։

Էն քրռասուն կյումաշու օժ տվող տղան ասում ա.— Վեչինչ, մրեզ մին պեն չի ինիլ։

Էն ասթխագետ ախպորը կյողլ ա կցնում։ Օշափը կյամ ա։ Ըսկըսում ըն կոխլը կենալը։ Կոխլը կենում վախտը էտ տղան հախտըմ ա, օշափեն տփրկցընըմ, ըսպանըմ։ Ասթխագետ տղեն էլ թողում ա էտ ըխճկան քշտեն, ինքյը քյնա՛մ։

Շատ ա քյնա՛մ, խրեգյ ա քյնա՛մ, հըսնըմ ա մին սուրուն, ղա՛շանգյ շհա՛րի։ Տրեսնըմ ա մին մարթ էլա կա վեչ, նի յա մննում մին տոն, էլհա մին մինա՛կ ախճիգյ ա պտահըմ։ Էտ ախճիգյը լոխճան ղա՛շանգյ ա ինըմ, համ էլ խո՛ղունք։

Էտ տղեն ախճիգյն ասում ա.— Տուս եք, թա՛ չէ օշափը կկյա, քյըեզ օտե։

Օշափը կյամ ա, տրեսնում էտ տղան նստած։

Ասըմ ա.— Դէ վեր եկալ ըս ըստեղ, գյիգա՛ վեր իմ էրկու ախպորս սպանալ ըս, մհենգյ կոխլ ընք կննական, վեր հխտեցե, քյըեզ ըստրկցըննական ըմ։

Տասնրհենգյ սուրթկա կոխլ ըն կենում։ Քրռասուն կյումաշու օժի տա՛ռը հախտըմ ա օշափեն, սպանըմ։ Ետնան էտ ըխճկանը նհետ փսակվըմ, ուրա՛ն հետե լա՛վ ապրըմ։

Էտ տղեն երգյիրան մին թաքավեր էտքանը գյուղըմ ա։ Օզըմ ա, վեր էտ տղեն կնեգյը տանե ուրա՛ն հետե ուրա՛ն թաքավերութունը։

Ասըմ ա.— Հու վեր կարե էտ ըխճկանը պիրի, քաշավը մին վրեսկե յըմ տալու։ Վեչ մինը վեզ չի օնըմ։

Մին պառավ վեզ ա օնըմ։

Պառավը կյամ ա էտ տղեն տոնը ասըմ, վեր թողին ղարավաշութուն անե։ Տղեն կնեգյը օզում չի։

Տղան ասըմ ա.— Ցրես իմ մոր մետս ըմ քցում, էս կնգանն ըմ նմրնցնըմ, թող կյա։

Էտ պառավը կյամ ա ըսկըսըմ կործ անիլը։

Մին օր պառավն ասըմ ա. Տու մարթիտ սեկրետը գյուդում ը՞ս։

Կնեգյն ասըմ ա.— Չէ՛։

Պառավը ասըմ ա.— Պա տուք հո՞ւնց մարթըկնեգյ ըք, վեր ուրուր սեկրետ գյուդում չըք։

Կնեգյն ասում ա. — Ցրես գյիդա՛ալ պիտիմ։

Ուրուգյունը, վեր մարթը կյամ ա տոն, կնեգյը օնքերը ուրուր ա տամ։ Մարթը հըրցնում ա պաճառը։

Կնեգյը հըրցըփորց ա անըմ մարթան, ասըմ ա. — Քու սեկ-
ըրետըտ գյուդում չըմ. ըտրա հետի էլ ըստի յըմ։

Մարթն ասըմ ա. — Իմ սեկրետըս վեչ մինը գյիդըմ չի՞, մինակ
յըես ըմ գյուդում, դե քյըեզ ասըմ ըմ, հենց ըրա օրիշ գյիդա՞ վեչ։

Ուռութանան պառավը եր ա կենում էտ կնդանան հըրցընում
մարթին սեկրետը։ Ախճիգյն ասում ա, վեր ուրա՞ն մարթին մեշկումը
մին ղամա՞ կա, տա ընդրա օժն ա։ Հու յոր օնե մեշկան, դա՞ստի տղան
մըռնելու յա։

Պառավը քշերը ղամա՞ն հանըմ ա, տանըմ քցըմ ծովը։ Տղան
մեռնըմ ա։ Մին էլ մին թիլիսիմ ա սարքում ծովեն ղրաղեն, միչև
էն թաքավերեն երգյիրը։

Ետավ կյամ ա տոն, էն կնդանն ասում.— Քյնանք ծովեն ղրաղը։
Հենց էտ վախտ թլիսիմը էտ տղեն կնգանը տանում ա էն թաքավե-
րեն երգյիրը։

Խա՞րը տանք ախպորը։

Մին ուրուգյուն ասթխագետ ախպերը ըրազումը տեսնում ա,
վեր ախպորը ասթխը ծլլաց, վեր ընգավ։ Գյիդա՞ց, վեր ախպերը
մեռավ։ Տա քյունըմ ա ծովումը ասեղ քթենող ախպորն ասըմ, վեր
իստի պեն կա։ Ըտահանք գյիդում ըն, վեր խանչալը եր ըն կալալ,
քցա՞լ ծովը։

Ասեղ քթենող ախպերն ասում ա.—Յըես քյնա՞մ ըմ ծովըմը
ման կյամ։ Էրկու սուտկանը ետը վեր տուս եկե, եկե, վեր տուս չեկե,
գյիդա՞ վեր պեն ա պտահալ։

Էրկու սուտկանը ետը քթանում ա ղամա՞ն մին ծունկի մեշկի
ղարխ իլա՞ծ։ Եր ա օնում, պիրում։ Պիրում ա կապում ախպորը
մեշկը։

Ախպերը եր ա կենում, ասում.—Պա՛հ, էս հի՞նչ շատ ըմ քոն
իլա՞լ։

Ըտահանք նաղլ ըն անում պըտահածան։

Տղան ասըմ ա.— Լա՞վ, տուք քյե՛ցեքյ ծեր տեղերը, յըես քյնա՞-
կան ըմ, կնդանս քթենամ։

Քյունում ա հա՞մա՞ն տեղը, հիշտեղ վեր կնեգյը կյողլ ար կացալ։

Էտ տըղան քյնում ա մին պըռավու տոն, հըրցնում ըտեղի
թա՞զա խրրներեն անա։ Պառավն ասըմ ա, վեր թաքավերը իստի մին
կնեգյ ա պերալ։ Կնեգյը օղում չի թաքավերին նհետ ապրե, ըտրա
հետե էտ կնգանը դուսաղ ա ըրալ։

Տղան ասըմ ա.— Պառավ, կկարի՞ս էս մուտանան տանիս տաս

ուրան, համ էլ ասիս, վեր ուրուգյունը սհաթի օխտին կյլական ըմ քյըեզ տանիմ։

Էտ վախտը մին քաչալ ըտեղ ա ինում, էտ լօխ լըսում ա, քյընում ա յոր օնում էտ ըխճկանը, ասըմ.— Մարթտ յըես ըմ, քյնանք քոն ինինքյ։

Քոն ըն ինում։ Քաչալը ըխճկանը կլՈխը կապում ա ուրան փեշկան, հանցու փախչի վեչ։

Ախճիգյը տեսնում ա, վեր տա ուրան մարթը չի, փեշկը կտրում ա, փախչում, կյամ մին երգյիր, տեսնում թաքավերը մեռած։ Թաքավերեն ղուշը պեց ըն թողում, հուր կլխե վրեննը կենա ընգրան տինին թաքավեր։ Ղուշը կյամ ա էտ ըխճկանը կլխեն կաղնում։ Պուրում ըն էտ ըխճկանը թաքավեր ճոկըմ։ Էտ թաքավերը ուրանց կլխավեր քյուչին յրա մին ախպուր ա շինում, ուրան պատկյերը քաշիլ տամ, տամ ըտեղատ, ղարավուլչոցը ասըմ.— Հու վեր ըտեղավ քյնալիս ախ անի, փոնեցեքյ պիրաք կոշտս։ Մին օր քաչալը կյամ ա պատկերը տրեսնըմ, ըսկսում ուշունց տալը։ Ըտրան փոնում ըն, տանում դուսաղխանան։ Մեհետ էլ մին ջահիլ տղա յա կյամ, պատկերը տրեսնում։ Ըտեղ ըտրա օշը տանում ա։ Ըտրան էլ ըն պիրում թաքավերին կոշտը։ Թաքավերը երկունեն էլ խուսուցընըմ ա, ըտրանց դիվանը անըմ։

Քըչալեն ասըմ ա.— Խե՞ պատկերը տեսնալավ ուշունց ըս տվա՞լ։

Քաչալն ասըմ ա.— Մեհետ էն ըմ իլալ մըեր քըղաքումը, իստի մին պառավ եկալ ա, էս համանն ըխճկանն ասալ, վեր մարթըտ կյալու յա, սհաթի օխտին տուս կկյաս, հանցու մարթըտ կյա, տանե։ Ցրես քյացալ ըմ խափալ, պիրալ իմ կոշտս։ Ինքյն էլ ինձ ա խափալ։

Կյամ ա էտ տղեն հըրցնում.— Խե՞ էն պատկերը տեսնալավ օշտ տարալ ա։

Տղան նաղլ ա անըմ ուրան քաշածը, ուրան կլՈխը եկածը։ Ախճիգյը դաստի գյուդում ա, վեր ուրան մարթն ա, ուրան ժողովրթեն իմաց ա տամ, վեր թա թողըմ ըն ուրան մարթը թաքավեր ինի, կենում ա ընդեղ, թա թողում չըն, քյընում ա մարթին նհետ։ Ժողովուրթը ռազի յա կենըմ։ Ըտրանք էրկուսավ տառնըմ ըն թաքավեր-թաքուհի. ընդրանա ետը ըսկըսում ըն լավ, սերավ ապրիլը։

Ընդրանք հըսին ուրանց մուրազեն, մունք էլ հըսնինք մըեր մուրազեն։